

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի N

**2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել 2019 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. 2019 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը 2019 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում սահմանված կարգով ներկայացնել Ազգային ժողով:

**Հավելված**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ**

Հ/հ	Ծրագրի վերնագիրը	Կազմակերպության անվանումը	Ֆինանսավորման ծավալը (հազար դրամ)
1	ԵՊՀ հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն» ծրագրին պետական աջակցություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	7000,0
2	«Մատենադարան» հիմնադրամի «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի (Հայսմավուրքներ, Ճառընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայում ու գիտատեխնիկական մշակում» ծրագրին պետական աջակցություն	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ» հիմնադրամ	18000,0
3	ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ ՊՈԱԿ-ի «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	22000,0
4	ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՊՈԱԿ-ի «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	8000,0
5	ՀՀ ԳԱԱ ԿՔԻ ՊՈԱԿ-ի «Գալարմինի կիրառական նշանակությունը տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	10000,0
6	ՀՀ ԳԱԱ «Էկոկենտրոն» ՊՈԱԿ-ի «Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն»	13000,0

	անվտանգության ապահովման համար» ծրագրին պետական աջակցություն	ՊՈԱԿ	
7	ՀՀ ԳԱԱ ՄԿԻ ՊՈԱԿ-ի «Հայկական գենոֆոնդի ուսումնասիրությունը և քարտեզագրումը» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	10000,0
8	ՀՀ ԷԵԲՊՆ «ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ-ի «Սարքավորումների մետաղի վիճակի հսկման ակուստիկ էմիսիոն մեթոդի մշակման նպատակով փորձարարական հետազոտությունների իրականացում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	8000,0
9	ՀՀ ԳԱԱ ԿՀԳԿ ՊՈԱԿ-ի «Կլիմայի փոփոխման և Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող լճային էկոհամակարգի վիճակի և նրա կենսառեսուրսների կարիլոգիական հետազոտում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	12000,0
10	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿԿ ՊՈԱԿ-ի «Հայոց արքաների դամբարանների հետազոտում. II փուլ, շարունակական պեղումներ» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ	12000,0

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2019 թվականի գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային  
ծրագրերը հաստատելու տալու

---

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 1559-Ա «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի 40.1 կետի, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգի» 7-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման են ներկայացվում 10 գիտական ծրագրերի նախագծեր: Վերջիններս հավանության են արժանացել ՀՀ ԿԳ նախարարի 25.07.2018 թ. N 785-Ա/2 հրամանով ստեղծված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և պետական նպատակային ծրագրերի նախագծերի քննարկման հանձնաժողովի կողմից:

Ցանկում բերված պետական նպատակային 10 ծրագրերի նախագծերից 9-ը գիտական կազմակերպությունների կողմից նախորդ տարիներին իրականացված ծրագրերի շարունակությունն են (ԵՊՀ, Մատենադարան, ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական

կենտրոն, ՀՀ ԷԵԲՊՆ Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական ԳՀԻ, ՀՀ ՄՆ Պատմամշակութային ժառանգության ԳՀԿ), 1-ը՝ 2018 թվականին ավարտվող ծրագրի տրամաբանական շարունակությունն է (ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոն):